

Ինչ որ տեսնել կարող ես՝ տես և գործ գիր գորա համար աչքդ: Իսկ ինչ անտեսանելիոն և յայտնականին է վերաբերում՝ Աստուծոյ խօսքով անաջնորդութիւնս:

Ախորժանք սովորելու ուրիշներէց և ուր խօսք է լինում՝ իմաստութեան, մարդկային երջանկութեան լուսոյ ազատութեան անարհմտութեան և ինչ մասին՝ ուշադրութեամբ ակնայ գիր: Մակոյն իսկոյն և անպատճառ մի հաստատաւ:

Ոչինչ մի սպասիր գործի վերջի և նոցա գործունէութիւնէց և ուր փողոցի վերայ աղմուկ են հասնում հետեւ ցնա:

Մէկը կամենում է քեզ իմաստութիւն ուսուցանել՝ նորա երեսին նայիր: Եթէ երեսակցում է իրեն՝ որչափ և զիտուն լինի ու անուանի թող ու ծանօթութիւնդ կորսիր: Ինչ որ շունչ մարդ չի կարող նաև ուրիշին տալ: Եւ նա չէ աղաւսով կամենում է: այլ աղաւս նա է՝ ով կամենայ կարող է ինչ որ անել պարտական է ..

Պաշտպանիւր ճշմարտութիւնը երբ կարող ես և թող յօժարութեամբ, որ քեզ ատեն նորա համար, բայց իմացած եղիր, որ ի գործը ճշմարտութեան գործը չէ: և զգոյշ կաց՝ որ նոքա իրար չխտնուեն, ապա թէ ոչ վարձդ ունոյն կլինի:

Բարին արա անջեզ և մի հոգաւ թէ ի՞նչ կլինի դորանից:

Պամեցիր միայն մի տեսակ բան, և կամեցիր սրտով:

Հոգս մարմնոյդ մասին, բայց ոչ այնպէս, իբր թէ հոգիդ լինէր ..

Օտար բաների մէջ մի խտնուիր, բայց քո դործը ջանասիրութեամբ կատարիր:

Ո՛չ քրի մի շողորթութիւր, և մի թող տուր որ քեզ շողորթութենս ..

Զգոյշ եղիր որ և է ազդկայ թշնամանալուց և մտածիր, որ քո մայրն ևս մի աղջիկ է եղել:

Մի սաս ամեն բան ինչ որ գիտես, բայց իմացիր միշտ ինչ որ ստում ես:

Մեծի հետ մի կապուիր ..

Ո՛չ թէ բարեպաշտ ձևացողներին, այլ բարեպաշտներին, յարգիր և հետևիր նոցա: Մի մարդ, որ ճշմարիտ Աստուծոյ երկիւղ ունի սրտում, արեգակի նման է, որ փայլում է և տարացնում: Եթէ չի էլ խօսում:

Արս ինչ որ վարձի արժանի է, առանց վարձ ցանկանալու ..

Երբ կեանքում փակիր աչքերս և մի լայ իմ վերայ:

Օգնիր մօրդ և պատուիր նորան: քանի կենդանի է, ապա թաղիր ինձ մտ:

Եւ ամեն որ մտածիր մահուան և կեանքի մասին՝ արդեօր կարող կլինին ուղիղ գտնել և ուրախ սիրտ ունեցիր: Մի հետացիր այս աշխար-

հից, առանց քո սերն ու պատկասանքը դեպի բրիտանէութեան Հիմնադիրը որ և է բանով ցոյց տուած լինելու:

Անելացնում ենք մի հատուած եւս անգլիներէն «Մեծ մարտի» անունով գրուածքից՝ որ գտնում ենք նոյն Chr. Welt-ի 5-րդ հ.ում:

Ք. Ա. Պ.

Մարդիկ կան, որոնք շարունակ բազմի հոռից ման են գալիս և երբէք չեն գտնում: Բազմը սովորաբար ուղիղ ճանապարհով չի մտնում: Փուկեանցով հետամուտ ես լինում քո պարտականութիւնը կատարելու և զարմացած ես մնում՝ աւելին գտնելով, քան որոնում էիր: Բազմը չգտնելու ամենապարհալ ճանապարհն է քո հետամտութեան նպատակակէտ գործնել այն: Հեշտ խուսափող մի բարիք է նա, որ քո ճանապարհի վերայ պտտուում է, բայց մօտ չի թողնում: Փորձիր ձեռքդ վրան դնել՝ և ահա յետ կցատկի, ինչպէս այն վարի այժեամբ սարերի զլինին: Բազմ որոնելը նման է ծիածանի ծայրը որոնելուն. նա յետ յետ է փախչում, երբ մտնում ես, և բռնել չես կարող: Արքան և ծրագիրներ կազմես ու ետեւում աշխատանք թափես բազմի համար՝ ստիպուած պիտ լինես ձեռք վերցնել նորան հետամուտ լինելուց և բաւականաւ պարտքի պարզ ու զժուարակիս ճանապարհը բռնելով, խղճիդ հաւատարիմ ու Աստուծոյ կամքին հնազանդ լինելուն մէջ քո ուրախութիւնը գտնելով: Պամենում ես իսկական բարիք ձեռք բերել՝ վարուիր ինչպէս նախորդը, որ նախ ցուկը աւելի վեր է ուղղում: Ճիշտ նպատակին համեմուտ համար, Հետամուտ եղիր աւելի բարձր բանի, քան բազմաբարեթիւնն է. բարձրը անշուշտ իւր մէջ նաև ցածրը կամփոփէ:

ՕՏՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ:

Վերջին ժամանակ սուտաց մի քանի աղ-գեցիկ թերթեր լուրջ ուշադրութեան անտրեւայ դարձրին մօտիկ ապագայում Տիեզերական ժողով ունենալու խնդիրը: Այսպէս Новое Время-ն առիթ առնելով Մոսկուայի մետրապօլիտ Սրբ. Վլադիմիրի մի ճառում արտասանած խօսքերը: Օղկ մէջ այժմ ակնդերական ժողով գումարելու ձգտումներ են տարւաբերում: չափազանց կարեւոր մի երեւոյթն է՝ գրում է: Մի

ժամանակ առանձին էին յայնքան պիտու մի-
 ձեղն խնդիրներն լուծու մն ընդունելու համար
 այժմ ընդհակառակն է. այլ և Հռոմի վեհական եկե-
 ղեցուց անջատուած սլաւոններ, հին կաթողիկէներ,
 անդիկիաններ, պաճարանազական բողոքականներ
 բոլորեքեան իրենց հայեալքք գեպի ուղղափառ
 Ռուսաստանն են դարձրել: Տիեզերական ժողով
 դուժարելու հարցը ուրիշ անդամներ ևս տրճար-
 ծուել է. 11 տարի առաջ Մասկուայում շատ
 դրուեցաւ այդ մասին և առաջարկուում էր՝
 Ռուսաց քրիստոնէութիւն ընդունելու 900-րդ
 թիւն այդպիսի ժողով հրաւիրել: Այստեղ արդէն
 խնդիր էր լառաջացել, թէ ում է ժողով հրա-
 ւիրելու իրաւունքը, և սրտի. Գորշակով յայտ-
 նել էր իւր հեղինակաւոր կարծիքը, թէ քրիստ-
 առաջին Ս դարերում այդ իրաւունքը պատկա-
 նել է կայսրներին, բայց Եկեղեցուց հայտարարե-
 ներն են իսկական պատճառը եղել, խնդիր յա-
 բուցել, և նոցա համաձայնութիւնը անհրաժեշտ է
 համարուել: Եկեղեցին կարող է ուրեմն և պէտք
 է զբողոքի ժողովի հարցով յարարելութեան մէջ
 մասնակցող անդրական եկեղեցիներին ներկայացուցել-
 ների հետ միայն թէ նորա գործողութիւնները
 հակառակ չլինեն պետութեան: — Կերպու մն
 նոյն խնդրի մասին իրենց կարծիքներն են յայտ-
 նում երկու եկեղեցական կեանքին ի մտայ ծա-
 նօթ հեղինակներ՝ Սերէեյ և Գուրնովօ: Սերէեյ
 պաշտպանում է հակառակ վերջնոյն այն միտքը,
 թէ Ս. Պապայ անեղ պատրաստը կարող է առ-
 առուելն նախադատող լինել անեղ ժողովում,
 իսկ հրաւիրելու իրաւունքն անպայման Ռուսաց
 կայսեր է պատկանում՝ ոչ միայն իրեն Բիւր-
 կայսերաց ամենամօտ ժառանգի, այլ և իրեն
 միակ զօրաւոր ուղղափառ աէրութեան վեհա-
 պետի. Գուրնովօն նախատեսում է, որ այս ժո-
 ղովի մէջ ի թիւս այլոց հարց կլինի Ռուսաց եկե-
 ղեցուց բարձրագոյն վարչութեան մասին, մինչ
 առ պատրիարքութիւնը վերջացնելուց յետոյ
 առանց զլսող է մնացել. ինչպէս և Իմերէթի ու
 Աբաստանի եկեղեցիներին Ռուսաց եկեղեցու հետ
 ձուլելու խնդրի մասին, որ Սերէեյ հակառակ
 է համարում կանոնական կարգերի. Այսպիսի և
 ուրիշ նման խնդիրներն հետ կապուած գծուա-
 րութիւններն ի նկատի ունենալով՝ Գուրնովօ ներ-
 կայ պայմաններում անեղ ժողով դուժարելն ան-
 կարելի է համարում, իսկ Սերէեյ ընդհակառակն
 պնդում է, որ այդ ոչ միայն հնարաւոր է, այլ և
 անհրաժեշտ է, որ Ռուսաց եկեղեցին աշտպիտով
 մասնակցութիւն ունենայ արեւմտեան բրետա-
 նէութեան յարուցած բազմաթիւ կրօնական խն-
 դիրներն լուծման մէջ, Գուրնովօ կարծում է, որ
 անեղ ժողովից առաջ պէտք է կլինի անդրական
 ժողով դուժարել, որ Ռուսաց եկեղեցուն տար-
 իւր նախկին կանոնական կազմակերպութիւնը

ընկեր հերձու անսոյններն եկեղեցուց զերկը վերա-
 դարձուելու միջոցները, և ինչ Այսպիսի հարցերի
 լուծումն և նոյն իսկ պատրիարքութեան վերա-
 կանդնումն նա կարելի է համարում նախ քան
 անեղ ժողովի դուժարուելը, որպէս զի Ռուսաց
 եկեղեցին առաջնորդող զերկը բանակով նորա մէջ
 ընդհակառակն միտք բոլոր եկեղեցուց ներկայա-
 ցուցիչներն առաջ տանալու անցնել իւր այս և այն
 թեւորութիւնները հրապարակ հանելու: Ամենա-
 կարեւոր խնդիրը Ռուսաց եկեղեցու համար՝ ծի-
 սական է երբեմն բողոքովն մանր խաղաթիւննե-
 րով նորանից բաժանուած միլիոնաւոր դուրս ժո-
 ղովից իւր հետ հաշտեցնելն է հարկաւ, և շա-
 տերի կարծիքով իրաւորեւ կարող է այդ սխալն
 անեղ ժողովի հեղինակութիւնը վաշտուց մի վճիռ:
 « Եւ երբ կըրում է Новое Время-ի աշխատա-
 կիցը իւր համառօտ անսութիւնը՝ աւելի յարմար
 է և բարւոր որ նա անցի ունենայ, քան խոստացու-
 թիւն աւետարանող Թագաւորի իշխանութեան
 օրով, որ ոչ և որում է անցող աշխարհը խոստ-
 դայնելու ջերմ ձգտումներով: Ի պաշտպանութիւն
 Ռուսաց եկեղեցուց դատութեամ և վարձան այն կզ-
 բայրեական գծում թեւում, որ ահա երկը դարբա-
 ժանում է ձգել նորա մէջ՝ անկասկած ամենամեծ
 դէպքը կլինէր եկող նոր դարի և ոչ միայն Ռու-
 սաստանի, այլ և ամբողջ քրիստոնէաց աշխարհի
 կեանքում: »

ԲՈՂՈՒՅԵՆ ԵՎ ԵՂԵՆԵՐ.

Վերամիտ.

Ներկայ թիւի փետր. 6 — Տիւն Հայլէ բարա-
 րում անդի են ունեցել Առաքելութեան խորհրդի
 (Missionskonferenz) նիստերը, որոնց մասնակցում
 էին Հայոց օգնող ընկերութեան Երբիլի Ճիւղի
 ներկայացուցիչները, և օրակարգի ամենահետաքրքիր
 նիւթերից մէկն էր Գր. Բարբախի ատենախօսու-
 թիւնը Հայերի մասին: Մեր ընթերցողներին արդէն
 ծանօթ հայտերը նոյնպիսի մի ատենախօսութիւն
 կարդացել էր յունուար 18-ին՝ նոր-թատրոնի
 դահլիճում: Բայց կրկին սպասածից աւելի մեծ
 բազմութիւն էր ժողովուել նորան լսելու, նորա
 խօսածները, որ բովանդակու թեամբ շատ նման էին
 միմեանց, կարելի է հետեւեալ կերպով ամփոփել.

Երբոյ ատենախօսը յարանց, որ ինքը երկու
 անգամ ծանուցարհորդել է Հայաստան՝ մի անգամ
 1897-ին Հիւսիսային կամ Ռուսական բաժինը, և
 երկրորդ անգամ անցեալ թիւն, կրը Այրարատից
 անցել է Վան, որտեղից Վանայ լճի հարաւային ե-
 ղերքով Բիթլիս, և Տիգրիսի արեւելեան աղբիւրնե-
 րի վերայից անմասշտակի դաւառակներով հասել է
 Մուշ՝ ու կարպետ, և այնտեղից զիմել Բալու
 վերին Եփրատի հովիտը ապա Խարբերդն անցնե-

լով՝ հասել է արքունական մեծ պողոտային, որ Բաղդատի վերայով գնալով միայնում է Սե Ժուր և Պարսից ծոցը. Խարրերդից շարունակել է իւր ճանապարհը դէպի Մալաթիա, Սերաստիա և Վապարովկոյ Սեսարիան, իսկ այնտեղից Վիլիկիա, Պաղեստին և Վ. Պոլսի վրայով վերադարձել է Գերմանիա:

Խօսելով հայ ժողովուրդի առանձնայատկութեանց մասին, նա ամէնից առաջ հերքեց եւրոպական մամուլի մէջ վերջին ժամանակներս լոյս տեսած աննպաստ կարծիքները, մանաւանդ յայտնի պատ. Նաուսմանի յոգուածը, շեշտելով որ տահասարակ գերմանացիները հայ ժողովուրդին չեն ճանաչում և Հայաստանի մասին ևս իրենց ունեցած աշխարհագրական տեղեկութիւնը այնքան է, որ կարծում են թէ նա Փոքր Ասիայումն է գտնուում որ սխալ է. «Վ. Պոլսի հայերով ամբողջ հայ ժողովուրդին չի կարելի չափել. հակառակ դեպքում մեր եզրակացութիւնը այնքան ուղիղ կլինի, որքան ուղիղ է միայն Պրայի գերմանացիներին ի նկատի առնելով՝ գերման ժողովուրդի մասին խօսելը և կամ ս. Պրանչիսկոյի շինացիներով ամբողջ շինաց ազգի մասին մի գաղափար կաղմելը. Հերքեց նաև Վարդ Ստանկինի «Ճանապարհորդական տպաւորութիւնները» ցոյց տալով որ այդպիսի լուրերի աղբիւրը գերման—տաճկական բարեկամութիւնն է և Վ. Պոլսի ճարպիկ հայ առևտրականների գերմանացի վաճառականների դէմ մրցելուց յառաջացած ահաճութիւնը: Իւր ճանապարհորդական տպաւորութիւնների և արևելեան ժողովուրդների տեսական և գործնական ուսումնասիրութեան վրայ հիմնուելով նա հայերին արևելքի միակ թարմ և ընդունակ ժողովուրդն է համարում որը կուշում է իւր կենսական ոյժերով քաղաքակրթական մեծ գեր կատարելու արեւելքում և ինչպէս որ ըստ ինքեան պարծանքի արժանի է նոցա նախնական քրիստոնեայ ժողովուրդներից մէկը լինելը, նոյնպէս և վստահ կարելի է ասել որ քրիստոնէութեան զրօշուկը նոքա կարող կը լինեն միշտ բարձր պահելը՝ նոցա մինչև օրս պահպանած հայի նահապետական բարոյականութիւնը, ընդունակութիւնը, յարատև ձգտումը դէպի քաղաքակրթութիւն՝ բոլորովին հրապուրել էին տեսնախօսին: Իւր հայ հոգևորական և աշխարհական բարեկամների իւր այդ ժողովուրդի զաւակների՝ Տիխիսուսի ս. Եջմիածնում Վ. Պոլսում կէն— առհասարակ հայ ուսեալ շրջանների հետ ունեցած ծանօթութիւնը նա իւր վերոյիշեալ եզրակացութեան փայլուն ապացոյց ներկայացրեց, նա շեշտեց որ թէ հոգևորական և թէ աշխարհական զարգացած հայը բարոյական ինքնագիտակցութիւն ունի և կամք ժողովուրդի վերքերը բուժելու համար՝ ունի հոգևական և բարոյական կարողութիւն. ինչ որ նրան պակասում է, այդ ձեռնարկութեան արտօնութիւնն է:

Իւր ճառը վերջացրեց պ. Քորբախ նկարագրելով հայերի թշուառ դրութիւնը Տաճկահայաստանում՝ այնպիսի փայլուն գոյներով որ շատ ունկընդիւրներ մանաւանդ տիկիներ, սարսափման նշաններ էին տալիս և դէպի իրենց դաշնակիցները վայրենի գազան, բարբարոս—մակդիրները ուղղում: Ի վերջը Յարգելի առնախօսը շեշտեց որ հայերի որբերին կրթելով, այրիներին պատասխարելով իրենց նպատակը պիտի լինի զուտ մարդասիրական, այսինքն՝ ոչ թէ աշխատել նոցա մայրենի եկեղեցու գրկից խլել այլ Փրկչական խրատին հետեւելով՝ սովածներին կշտացնել, ծարաւներին ջուր տալ, մերկերին հագցնել, այրիներին ապաստանարան տալ, որպէս զի իրենց քրիստոնէական պարտը կատարած լինին դէպի իրենց կրօնակից եղբայրները և հովանաւորած լինին մի ճշմարիտ քաղաքակիրթ, ինքնուրոյն, կենսունակ ժողովուրդի:


Վերջին խնդրի, այսինքն գերմանական օգնութեան կարօտ հայերին բողոքականութիւն ընդունել տալու մասին խօսեցին նաև Պր. Լիպսիուս, աագերեց Վետլեր և մի քանի այլ ճառասրտներ: Պր. Լիպսիուսը յայտնելով որ այդ սկզբունքը երկու տարի առաջ ինքն է հրատարակ հանել և պատրաստ է միշտ պաշտպանելու՝ աւելացրեց նոյնպէս որ իրենք ներկայումս 4 որբանոց ունին, * որոնց մէջ մօտ 600 որբեր են խնամում: Այդ որբերը պէտք է իրենց մայրենի եկեղեցու աւանդութիւններով մեծանան և իրենց մայրենի լեզուն սովորեն, եկեղեցի պիտի տարուին պիտի հաղորդուին և ինչ որով շուտ և ասաց նա պաշտպանելով Բորբախի տեսութիւնը, արևելքում երբ մի մարդ իւր եկեղեցին թողնում է, նա կորած է համարում, նաև իւր ազգութիւնը՝ ուրեմն հայերի նկատմամբ կրկնապատիկ վստահաւոր է մայրենի եկեղեցուց խլուելը. նախ՝ որ եղած երկպառակութիւնը զբանով աւելի մեծ ծաւալ է ստանում ևրկբորդ՝ որ իրենց ազգութիւնից են բաժանուում: Այդ պատճառով և աւելացրեց մեծահոգի ճառասուր՝ ևս դէմ եմ բոլոր մարդորսական ձգտումներին և մեր ամբողջ քարոզութիւնը միայն աւետարանի աստուածային անեղծ բարոյականութիւնը տարածելու մէջ պիտի լինի, որպէս զի Քրիստոսի անդաստանում հայ եկեղեցու փոժեղը իւր սեպհական գոյնով և հատով աւելի մաքուր և աւելի հրապուրիչ ներկայանայ և ոչ թէ այլ եկեղեցիների միօրինակութեան մէջ կորչի:

Նոյն միտքը հաստատեցին նաև յաջորդ ճառասրտները և մօտ ժամը 11 1/2-ին փակուեց նիստը, վերին աստիճանի գօհ տալաւորութեան տակ թողնելով ներկայ եղող հասարակութեան:

* Պր. Էլայում, Քարբիլեանի նոյնում ևս նմանում:

Մասնաւ ձեռք եւ շարունակ գրում են Վերամանական ազգի գէպի հայ կարօտեալ ժողովուրդը բռնած գերբ պարզարանող յօդուածներ: Եկեղեցական ամենակարեւոր թերթերից մէկը հօսք էր ստացել Ելքտոնից թէ ինչու նա իւր կարծիքը չէ յայտնում այս խնդրի մասին: Մեր կայսրահին թեանցուհ Բոսփորի ափին Մարգարայանի հետ նորա այցելութիւնը հարեմում ցաւեցրեց մեր աւետարանական Ելքտոնցիների սիրտը: ասում են նորա իսկ թերթը աշխատում է Վերմ կայսեր քաղաքականութիւնը պաշտպանել, առարկելով որ Տաճկաստանում ընդհ. քրիստոնէակաների կատարած չէ կղեւ այլ հայերի իւր այդ ներքին գործ է որ ինչքան և շար ու արեւնախանձ լինելը օտարը նորա մէջ խառնուելու իրաւունք չունի. և կոչըքը բարեկամութիւն ցոյց աւելով տաճիկներին նոցա հարատակ քրիստոնէականներին աւելի է օգնած լինում՝ քան բողոքելով նոցա գէմ:—Առհասարակ բոլոր արեւելքի քրիստոնէակաների նկատմամբ շատ ապրելու ուսում են կայսեր պաշտօնական անգլիկոսներ և կողմնակի դիտողների կարծիքները: Մինչ առաջինները տաճիկներին են շտապաւորում նոցա դանազան գեղեցիկ յատկութիւններ վերագրում՝ ահա ինչպէս է դատում օրենսակ զերջիններիցս մէկը: Ըսին տեղ արեւելքում ևս այն արարտութիւնն սաացայ, որ քրիստոնէայ ազգաբնակից թիւնը, այլ և մեղից ամենահետու եկեղ. համայնքի պատկանողները՝ ընդհանրապէս առած բարձր են մահմեդականից: Ինչպէս անհոսասիելի մահուան է դատարարուած: Նորա բաւարարին դուրի լինելը որ և է զքրիստոնէական գաղութարկից. իւր ճակատագրական տեսութիւնից անհրաժեշտաբար հեռանող անհամբերտարութիւնը, որի նկատմամբ կասկածել պէտք չէ՝ բարձր գասակարգի անձնաւորութեանց հանդիսան որ և արժանաւորել բռնուածքը տեսնելով: Ընդամենութեան մեղիացուցիչ ազդեցութիւնը որ մի ակասի երկրորդը դրախտ է նորա համար և զմիտ հետ կանգուած ոտոր դիւրք կնոջ, որ մինչև անգամ հոգուց դուրի է համարում— դարձում են նորան իսկական քաղաքակրթական կեանքի համար անմատչելի և անպէտք: Ընդհակասակն արեւելքի քրիստոնէայ ժողովուրդները նոյն իսկ եթէ նոցա քրիստոնէութիւնն ըստ երևութիւն մի մեռեալ ձեռնամուրթիւն է միայն և դանազան վատ յատկութիւններ նոցա բնաւ որութեան ուղ և ծածն են մտել՝ այնուամենայնիւ ընդունակ են կենդանի քրիստոնէութիւն և իսկական քաղաքակրթական կեանք գորդացնելու: Նորա այնուամենայնիւ հարգողակից են զքրիստոնէական նպատակներ ունին միակնութիւնից դուրս ամուսնութիւն չեն ճանաչում և կենդանուցս մօտ հասարակ է մարդուն:

— Առաջարկեան արժանի է նաև Münchener Allgemeine Zeitung նշանու որ թերթի № 42 յաւելում է մէջ յառաջ բերում մի կաթնիկ քահանայի նամակը, որ Մայսիսիայ անդրձանցի վարիչն է: Նա գրում է անցեալ թիւի հոնա՝ Տին իւր մեծաւորին թէ Վերմ, դեպանատան արտապանութեան ներքոյ այդ քաղաքում բաշտած սրբանոցը սկսել է իրեն գրուել հայ որբերին որնք առաջ կաթնիկիցս դարձնելը էին յանձնուած: Նամակ գրողը դորա պատճառը համարում է այն, որ քաղաքականներն ամենայն մեծահոգութեամբ և աչքի ընկնող գոհարիտութիւններով օգնել են հայերին կարիքի միջոցին՝ որով և նոցա վաստակութեան են ձեռք բերել: Նա երկիւղ է յայտնում՝ մի դուրի աշտակով միեւնոյն ժամանակ Վերմ կասակարութեան ազդեցութիւնը գործնայ և Ֆրանսիականը բնիկ:



ԵԿԵԼԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԿՐԹՈՒԱԾ ՔԱՀԱՆԱՆԵՐԸ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԻ:

Միջնակարգ դպրոցի կրթութիւն ունցող մեր երիտասարդ գիւղական քահանաներից մէկը արձագանգ տալով մեր հրատեղին ուղարկել է եւ խստատնում է ուղարկել մեզ ա կնարկներ «ժողովրդիան մէջ ինչ ինչ ստորութիւնների եւ գեղձումների վերաբերմամբ»:

Իւր առաջին ակնարկներով նա շօշափում է կրկին այն հին ցաւը թէ մեր քահանաներն ըստ մեծի մասին անհամարատական են իրենց կոչման: Եւ այդպիսի տգէտների քաղմանալուս պատճառ համարում է գլխաւորապէս ընտրողների խաւար նայեացքը. Այդպիսի մարդիկ սիրում են որ քահանան ստոր լինի իրենցից, որ կառողմանն նորա գլխին պուպը ջաքդել է սիրում են այնպիսի քահանայի, որք իրենց կեղծաւորաբար շողորթում է: Թէ որչափ ուղիղ է այս կարծիքը՝ մենք չէինք կամենայ ընկալտել: կնկատենք միայն որ յիշան մեր ժողովուրդը: Եւ ոչ միայն տգէտ, այլ եւ